

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 





ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ

Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

Աշոտ Օսիպյան (անուն, ազգանուն)	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	13.11.2015թ. (ամսաթիվ)
Դավիթ Հարությունյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ (պաշտոն)	 (ստորագրություն)	13.11.2015թ. (ամսաթիվ)
Բազրատ Ճգմաչյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ (պաշտոն)	 (ստորագրություն)	13.11.2015թ. (ամսաթիվ)
Տիգրան Գալստյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ (պաշտոն)	 (ստորագրություն)	13.11.2015թ. (ամսաթիվ)
Սուրեն Կարապետյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների վարչության պետ (պաշտոն)	 (ստորագրություն)	13.11.2015թ. (ամսաթիվ)
Զարուհի Մելքոնյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ (պաշտոն)	 (ստորագրություն)	13.11.2015թ. (ամսաթիվ)
Կարեն Հակոբյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ (պաշտոն)	 (ստորագրություն)	13.11.2015թ. (ամսաթիվ)

ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կառավարման մարմինների միջանկյալ սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

ԱԿՏԻՎՆԵՐ

Հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի ավարտին Բանկի ակտիվները կազմել են 125,780,405 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 12,720,030 հազ. ՀՀ դրամով կամ 11.3%-ով, իսկ 30.06.2015թ. համեմատ՝ աճել են 43,316 հազ. ՀՀ դրամով կամ 0.03%-ով:

2015 թվականի երրորդ եռամսյակի ավարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է եղել՝ ՀՀ կենտրոնական բանկում կանխիկ դրամական միջոցների և մնացորդների՝ 13,429,421 հազ. ՀՀ դրամով կամ 83.6%-ով, Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների՝ 1,879,905 հազ. ՀՀ դրամով կամ 13.3%-ով և Հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների՝ 1,741,474 հազ. ՀՀ դրամով կամ 2.8%-ով ավելացմամբ:

2015 թվականի նախորդ եռամսյակի համեմատ, Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է եղել Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների՝ 6,712,474 հազ. ՀՀ դրամով կամ 72.6%-ով և Հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների՝ 2,097,932 հազ. ՀՀ դրամով կամ 3.4%-ով ավելացմամբ:

Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների մնացորդները կազմել են 63,601,429 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 1,741,474 հազ. ՀՀ դրամով կամ 2.8%-ով, իսկ 30.06.2015թ. համեմատ աճել են՝ 2,097,932 հազ. ՀՀ դրամով կամ 3.4%-ով:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տրամադրվել է 25,259,534 հազ. ՀՀ դրամի վարկ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ընթացքում՝ 27,554,299 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տրամադրած վարկերը սպասարկվում են պայմանագրերին համապատասխան և գերակշռող մասը դասակարգված են որպես ստանդարտ վարկեր, որի հիման վրա կարելի է կարծիք կազմել վարկային ռիսկի կառավարման բարձր մակարդակի մասին:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Հաշվետու ժամանակահատվածի ավարտին Բանկի վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների մնացորդները կազմել են 11,950,552 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 4,360,608 հազ. ՀՀ դրամով կամ 26.7%-ով, իսկ 30.06.2015թ. համեմատ նվազել է 218,917 հազ. ՀՀ դրամով կամ 1.8%-ով:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի կողմից պետական արժեթղթերով կատարված գործառնությունների ծավալը կազմել է 21,385,533 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 22,148,256 հազ. ՀՀ դրամի դիմաց:

Արտարժույթային գործառնություններ

Հաշվետու ժամանակահատվածում Բանկի արտարժույթային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմել են.

ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 181,931.7 հազ. ԱՄՆ դոլար,

ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 5,921,679.0 հազ. ՌԴ ռուբլի,

Եվրոյով գործարքների ծավալը՝ 45,716.8 հազ. Եվրո:

Վերը նշված արտարժույթային գործառնություններից հաշվետու եռամսյակում ստացված զուտ եկամուտը կազմել է 212,984 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 197,007 հազ. ՀՀ դրամի դիմաց:

Պարտավորություններ

Հաշվետու եռամսյակի ավարտին Բանկի պարտավորությունները կազմել են 103,441,093 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 12,345,701 հազ. ՀՀ դրամով կամ 13.6%-ով, իսկ 30.06.2015թ. համեմատ նվազել են՝ 59,067 հազ. ՀՀ դրամով կամ 0.1%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների՝ 6,704,673 հազ. ՀՀ դրամով կամ 16.0%-ով, Հաճախորդների նկատմամբ պարտավորությունների՝ 4,429,180 հազ. ՀՀ դրամով կամ 9.5%-ով և Բանկի կողմից թողարկված արժեթղթերի՝ 1,148,500 հազ. ՀՀ դրամ կամ 69.9% ավելացմամբ:

30.06.2015թ. համեմատ, պարտավորությունների նվազումը՝ 59,067 հազ. ՀՀ դրամով կամ 0.1%-ով, հիմնականում պայմանավորված է Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների՝ 1,066,037 հազ. ՀՀ դրամով կամ 2.1%-ով նվազմամբ:

Ընդհանուր կապիտալ

Հաշվետու եռամսյակի ավարտին Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 22,339,312 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 374,329 հազ. ՀՀ դրամով կամ 1.7%-ով, իսկ 30.06.2015թ. համեմատ՝ 102,383 հազ. ՀՀ դրամով կամ 0.5%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ընդհանուր կապիտալի աճը պայմանավորված է Զբաղիված շահույթի՝ 392,084 հազ. ՀՀ դրամ կամ 3.2% աճով և Բանկի գործունեության արդյունքում ձևավորված շահույթի հաշվին Գլխավոր պահուստի՝ 600,000 հազ. ՀՀ դրամ կամ 66.7%-ի չափով համալրմամբ:

30.06.2015թ. համեմատ, Բանկի ընդհանուր կապիտալի աճը պայմանավորված է հաշվետու ժամանակահատվածում ձևավորված շահույթի և վերագնահատման պահուստների աճով:

Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի տոկոսային և նմանատիպ եկամուտները նվազել են 217,937 հազ. ՀՀ դրամով կամ 8.2%-ով՝ կազմելով 2,451,393 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տոկոսային եկամուտների զգալի մասը բաժին է ընկնում Բանկի ընթացիկ հաշիվներից, Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից ստացված տոկոսային եկամուտներին (71,616 հազ. ՀՀ դրամ կամ 2.9%), Հաճախորդներին տրված վարկերից և փոխառություններից՝ (2,014,844 հազ. ՀՀ դրամ կամ 82.2%), Պարտքային արժեթղթերից ստացված տոկոսային եկամուտներին (313,865 հազ. ՀՀ դրամ կամ 12.8%) ու Ռեպո պայմանագրերից ստացված տոկոսային եկամուտներին (46,609 հազ. ՀՀ դրամ կամ 1.9%):

Հաշվետու եռամսյակում, Բանկի եկամուտների կազմում կոմիսիոն և այլ վճարումներից ստացված զուտ եկամուտները կազմել են 160,449 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 6,179 հազ. ՀՀ դրամով կամ 4.0%-ով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է 2015 թվականի երրորդ եռամսյակի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը:

հազ. ՀՀ դրամ	2015 թվականի 3-րդ եռամսյակ	2014 թվականի 3-րդ եռամսյակ
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	2,451,393	2,669,330
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	-1,349,487	-1,168,212
Զուտ տոկոսային եկամուտ	1,101,906	1,501,118
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	273,756	252,222
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	-113,307	-97,952
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	160,449	154,270
Եկամուտ շահաբաժիններից	0	0
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	225,594	256,160
Այլ գործառնական եկամուտ	116,843	107,795
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	-369,328	-352,383
Ընդհանուր վարչական ծախսեր	-856,949	-795,725
Այլ գործառնական ծախսեր	-201,170	-205,105
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ	177,345	666,130
Շահութահարկի գծով ծախս	-140,657	-21,654
Շահույթ հարկումից հետո	36,688	644,476

Հաշվետու եռամսյակում Բանկի տոկոսային և նմանատիպ ծախսերը կազմել են 1,349,487 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել են 181,275 հազ. ՀՀ դրամով կամ 15.5%-ով: Ծախսերի զգալի մասը բաժին է ընկնում Բանկի ընթացիկ հաշիվների՝ Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդների և վարկերի դիմաց կատարված ծախսերին (692,859 հազ. ՀՀ դրամ կամ 51.3%), Հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց կատարված տոկոսային ծախսերին (521,366 հազ. ՀՀ դրամ կամ 38.6%), Ռեպո պայմանագրերի դիմաց կատարված տոկոսային ծախսերին (64,973 հազ. ՀՀ դրամ կամ 4.8%) և Բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց կատարված տոկոսային ծախսերին (61,113 հազ. ՀՀ դրամ կամ 4.5%):

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի ընդհանուր վարչական ծախսերն ավելացել են 61,224 հազ. ՀՀ դրամով կամ 7.7%-ով՝ կազմելով 856,949 հազ. ՀՀ դրամ:

Շահույթ, շահութաբերություն և շահաբաժիններ

Հաշվետու եռամսյակի արդյունքներով, Բանկը ձևավորել է 36,688 հազ. ՀՀ դրամի զուտ շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 644,476 հազ. ՀՀ դրամ շահույթի դիմաց:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները՝ բերված տարեկանի, կազմել են՝

ROE (կապիտալի շահութաբերություն)՝ 0.66%,

ROA (ակտիվների շահութաբերություն)՝ 0.12%:

Հաշվետու եռամսյակի 36,688 հազ. ՀՀ դրամ շահույթի ձևավորման արդյունքում մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 28.7 ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 504.5 ՀՀ դրամի դիմաց:

Ծառայություններ և հաճախորդներ

Հաշվետու եռամսյակում Բանկի վճարահաշվարկային գործառնությունների ծավալները, որոնք իրենց արդյունքներով արտացոլվում են Կոմիսիոն և այլ եկամուտների տեսքով ստացված զուտ եկամուտներում, կազմել են 160,449 հազ. ՀՀ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի՝ 154,270 հազ. ՀՀ դրամի համեմատ:

Վճարահաշվարկային գործառնությունների ծավալային աճ ապահովող ծառայություններից է հանդիսանում կոմունալ վճարումների հավաքագրումը, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 648.9 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 3,283,505 հազ. ՀՀ դրամ:

2015 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկի ակտիվ հաճախորդների թվաքանակը կազմել է 115,528, որը 2014 թվականի սեպտեմբերի 30-ի համեմատ աճել է 2,246-ով:

Ակրեդիտիվներ

Հաշվետու եռամսյակի ընթացքում Բանկը թողարկել է 69,552 ԱՄՆ դոլարի ակրեդիտիվ:

Միջազգային դրամական փոխանցումներ

Հաշվետու եռամսյակում միջազգային դրամական փոխանցումների համակարգով փոխանցումների ծավալը կազմել է 72,120,104 հազ. ՀՀ դրամին համարժեք գումար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 86,650,171 հազ. ՀՀ դրամին համարժեք գումարի դիմաց:

Պլաստիկ քարտեր

Հաշվետու եռամսյակում Բանկի ակտիվ գործող պլաստիկ քարտերի թիվն աճել է 1,171 հատով, որից 154-ը բաժին է ընկնում ArCa վճարային քարտերին, 926-ը՝ MasterCard և Visa Card միջազգային պլաստիկ քարտերին, 91-ը՝ Diners Club միջազգային պլաստիկ քարտերին:

Հաշվետու եռամսյակի ավարտին Բանկի կողմից թողարկված պլաստիկ քարտերի քանակը կազմել է 132,403 հատ:

Ամփոփ ֆինանսական տվյալներ

	Հազ. ՀՀ դրամ	
Ցուցանիշի անվանումը	2015 թվականի 3-րդ եռամսյակ	2014 թվականի 3-րդ եռամսյակ
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	36,688	644,476
Սեփական կապիտալի միջին մեծություն	22,166,388	21,329,367
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	0.17%	3.02%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	36,688	644,476
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	127,035,832	117,548,915
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	0.03%	0.55%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	36,688	644,476
Գործառնական եկամուտ	1,604,792	2,019,343
Զուտ շահույթի մարժա (NPM), %	2.3%	31.9%
Գործառնական եկամուտ	1,604,792	2,019,343
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	127,035,832	117,548,915
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	1.26%	1.72%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	127,035,832	117,548,915
Սեփական կապիտալի միջին մեծություն	22,166,388	21,329,367
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	5.7	5.5
Զուտ տոկոսային եկամուտ	1,101,906	1,501,118
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	77,319,419	81,635,487
Զուտ տոկոսային մարժա (NIM), %	1.4%	1.8%
Տոկոսային եկամուտ	2,451,393	2,669,330
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	77,319,419	81,635,487
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	3.2%	3.3%
Տոկոսային ծախսեր	1,349,487	1,168,212
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային	66,715,411	58,419,798

Ծախսեր		
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	2.0%	2.0%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	36,688	644,476
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը, հազ. Հատ	1,277.50	1,277.50
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS), ՀՀ դրամ	29	504
Սպրեդ, %	1.1%	1.3%

Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Բանկի հետագա զարգացման խնդիրները և նպատակները պայմանավորված են Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով և Բանկի տարեկան բյուջեով սահմանված նպատակային թիրախներով և չափանիշներով ու դիտարկվում են հետևյալ ցուցանիշների փոփոխությամբ.

- Բանկի ընդհանուր ակտիվների մնացորդների շարունակական աճի ապահովում՝ հիմնականում վարկային ներդրումների աճի հաշվին,
- Ժամկետային ավանդների մնացորդների և ցպահանջ ավանդների մնացորդների աճի ապահովում,
- Բանկի հաճախորդների թվի շարունակական աճի, ինչպես նաև սպասարկման որակի բարձրացման արդյունքում նախատեսվում է ստացվելիք կոմիսիոն գումարների աճ,
- Վճարահաշվարկային ծառայությունների, այդ թվում՝ պլաստիկ քարտերով գործառնությունների ծավալման նպատակով, նախատեսվում է ընդլայնել համագործակցող կազմակերպությունների շրջանակները, ավելացնել Բանկի քարտապանների թիվը, որի ապահովման նպատակով կավելացվի նաև ATM-երի թիվը և տեղաբաշխվածության մակարդակը,
- Նոր մասնաճյուղերի ստեղծում ՀՀ այն տարածաշրջաններում, որտեղ Բանկի մասնաճյուղերի ստեղծումը համարվում է ռազմավարական նշանակություն ունեցող և Բանկի զարգացման համար անհրաժեշտ քայլ,
- Եկամտաբեր ակտիվների ծավալների աճի հաշվին տոկոսային եկամուտների աճ,
- Բանկի կողմից միջնորդական և վճարահաշվարկային ծառայությունների աճի հաշվին ոչ տոկոսային եկամուտների աճ, վերը բերված ցուցանիշների աճի դեպքում կարձանագրվի նաև զուտ շահույթի աճ:

հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 20-ի թիվ 68 -Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար
2012 թվականի մարտի 29-ի թիվ 292-Ն հրահանգով

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6 ա)

«30» սեպտեմբերի 2015թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.երևան, Պուշկինի 19

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(նազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ		Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	2,451,393	7,749,528	2,669,330	8,450,826
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(1,349,487)	(4,335,012)	(1,168,212)	(3,525,149)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		1,101,906	3,414,516	1,501,118	4,925,677
		-		-	
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	273,756	723,884	252,222	731,034
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(113,307)	(324,601)	(97,952)	(275,954)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		160,449	399,283	154,270	455,080
		-		-	
Եկամուտ շահարաժիններից		-	325	-	-
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	225,594	643,981	256,160	755,264
Այլ գործառնական եկամուտներ	6	116,843	423,086	107,795	276,468
Գործառնական եկամուտներ		342,437	1,067,392	363,955	1,031,732
Զուտ մասնառումներ ակտիվների					
հնարավոր կորուստների պահուստներին	7	(369,328)	(607,143)	(352,383)	(140,132)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(856,949)	(2,541,048)	(795,725)	(2,429,510)
Այլ գործառնական ծախսեր	9	(201,170)	(606,318)	(205,105)	(607,042)
Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս	10	-	-	-	-
		-		-	
		-		-	
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		177,345	1,126,682	666,130	3,235,805
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	11	(140,657)	(238,390)	(21,654)	(494,374)
Ժամանակաշրջանի շահույթ		36,688	888,292	644,476	2,741,431
Այդ թվում					
Մայր կազմակերպության բաժնեմաս					
Չվերահսկվող բաժնեմաս					

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.10.2015թ.



ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6 բ)

«30» սեպտեմբերի 2015թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.երևան, Պուշկինի 19

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ		Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ	Նախորդ ժամանակաշրջան
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		82,119.00	(272,969.00)	(26,173)	(137,967)
Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից		-	-	-	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ		82,119.00	(272,969.00)	(26,173)	(137,967)
Դրամական հոսքերի հեջավորում		-	-		
Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ		-	-		
Այլ համապարփակ եկամտի գծով շահութահարկ		(16,424.00)	54,594.00	5,235	27,593
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		65,695.00	(218,375.00)	(20,938)	(110,374)
Համապարփակ ֆինանսական արդյունք		102,383.00	669,917.00	623,538	2,631,057
Այդ թվում՝					
Մայր կազմակերպության բաժնեմաս					
Չվերահսկվող բաժնեմաս					

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.10.2015թ.



Ենթահավելված 7

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

Հավելված 7

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշմամբ

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ֆինանսական վիճակի մասին (ճև թիվ7)**

«30» սեպտեմբերի 2015թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.երևան, Պուշկինի 19

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթա- գրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (չստուգված)	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված)
1	Ակտիվներ			
1.1	Կամխիկ զբաղմունքի միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	29,487,822	41,448,355
1.2	Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ			
1.3	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	15,963,458	10,883,591
1.4	Առևտրային մատակարար պահվող ֆինանսական ակտիվներ	15		
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ	16	63,601,429	65,986,844
1.6	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17	11,950,552	15,424,281
1.7	Սիմյա մարման ժամկետը պահվող ներդրումներ	18		
1.8	Ներդրումներ վերահսկվող անձանց կառուցվածքային կապիտալում	19		
1.9	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ		780,537	329,700
1.10	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	2,543,699	2,645,065
1.11	Հետաձգված հարկային ակտիվներ	3	119,631	66,918
1.12	Այլ ակտիվներ	21	1,333,277	1,578,479
	Ընդամենը՝ ակտիվներ		125,780,405	138,363,233
2	Պարտավորություններ			
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	48,637,177	49,058,451
2.2	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	51,260,911	64,999,205
2.3	Բանկի կողմից քողարկված արժեթղթեր	24	2,792,008	1,847,950
2.4	Առևտրային մատակարարվող պահվող պարտավորություն	25	-	-
2.5	Վճարվելիք գումարներ	26	14,570	20,981
2.6	Հետաձգված հարկային պարտավորություններ	3	-	-
2.7	Պահուստներ	30	-	-
2.8	Այլ պարտավորություններ	27	736,427	767,251
	Ընդամենը՝ պարտավորություններ		103,441,093	116,693,838
3	Կապիտալ			
3.1	Կառուցվածքային կապիտալ	28	6,387,505	6,387,505
3.2	Էմիսիոն եկամուտ	29	1,947,880	1,947,880
3.3	Պահուստներ՝			
3.3.1	Գլխավոր պահուստ	30	1,500,000	900,000
3.3.2	Վերագնահատման պահուստներ		(281,798)	(63,423)
3.4	Զրաշխված շահույթ (վնաս)		12,785,725	12,497,433
3.5	Կապիտալի այլ տարրեր	29		
	Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ			
	Փոքրամասնության բաժնեմաս			
	Ընդամենը՝ կապիտալ		22,339,312	21,669,395
	Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		125,780,405	138,363,233



Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.10.2015թ.

Ենթահավելված 8

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

Հավելված 8

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին (ձև թիվ 8)

«30» սեպտեմբերի 2015թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(նազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ			Եմփխոն եկամուտ/մաս	Գլխավոր պահուստ	Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահսկարկից	Վաճառքի համար մատչելի Հիմնական ակտիվներ վերագնահատումներ	Դրամական հոսքերի հնչեղներում	Այլ բնթագիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ	Դրաշխված շահույթ/վնաս	Միջանկյալ շահութաբաժիններ	Ընդամենը	Դիվիդենդներ թաժմնաում	Ընդամենը կապիտալ
	Կանոնադրական կապիտալ	Հետ գնված կապիտալ	Ձուտ գումարը											
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Նախորդ Հիմնական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ)														
1. Մնացորդը նախորդ Հիմնական տարվա սկզբում առ 01 հունվարի 2014թ. (ստուգված)	6,387,505	-	6,387,505	1,947,880	700,000	-	446,331	-	-	10,151,001	-	19,632,717	-	19,632,717
1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդիսմուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2. Վերահաշվարկված մնացորդը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ թաժմնաումների (թաժմնաումների) գծով, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից համված թաժմնաումների (թաժմնաումների, փայերի) հաշվին	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
4. Համապարհակ եկամուտ	-	-	-	-	-	-	(509,754)	-	-	2,843,432	-	2,333,678	-	2,333,678
4.1.Ընթացիկ ժամականաշրջանի շահույթ (վնաս)	-	-	-	-	-	-	-	-	-	2,843,432	-	2,843,432	-	2,843,432
4.2.Դուստր ընկերության յրաշխված շահույթ (վնաս)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
5. Ըահութաբաժիններ	-	-	-	-	-	-	-	-	-	(297,000)	-	(297,000)	-	(297,000)
5.1 Ըահութաբաժիններ թաժմնաումներին	-	-	-	-	-	-	-	-	-	(297,000)	-	(297,000)	-	(297,000)
6. Մեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
6.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված աճանցյալ գործիքների աճ/նվազում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7. Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	-	200,000	-	-	-	-	(200,000)	-	-	-	-
7.1. Մասնաւումներ գլխավոր պահուստին	-	-	-	-	200,000	-	-	-	-	(200,000)	-	-	-	-
7.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7.3. Եմփխոն վնասի ծածկում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
8. Մնացորդը նախորդ Հիմնական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 31 դեկտեմբերի 2014թ. (ստուգված)	6,387,505	-	6,387,505	1,947,880	900,000	-	(63,423)	-	-	12,497,433	-	21,669,395	-	21,669,395

Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)														
9. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2015թ. (ստուգված)	6,387,505	-	6,387,505	1,947,880	900,000	-	(63,423)	-	-	12,497,433	-	21,669,395	-	21,669,395
9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
10. Վերահաշվարկված մնացորդը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
11. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործադրվող բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
11.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
12. Այլ համապարփակ եկամուտ	-	-	-	-	-	-	(218,375)	-	-	888,292	-	669,917	-	669,917
13. Շահութաբաժիններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
14. Մեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
14.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15. Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	-	600,000	-	-	-	-	(600,000)	-	-	-	-
15.1. Մասնաճանաչող գլխավոր պահուստին	-	-	-	-	600,000	-	-	-	-	(600,000)	-	-	-	-
15.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15.3. Էմիսիոն վնասի ծածկում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
16. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում սեփականների 2015թ. (չստուգված)	30 6,387,505	-	6,387,505	1,947,880	1,500,000	-	(281,798)	-	-	12,785,725	-	22,339,312	-	22,339,312

ԿՏ



Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.10.2015թ.

Ենթահավելված 9.1.

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

Հավելված 9.1.

սնրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (ձև թիվ 9 ա)

«30» սեպտեմբերի 2015թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բ.ԵՐԵՎԱՆ, Պուշկինի 19

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
1	2	3
Շահույթ հարկումից առաջ	3,235,805	1,126,682
Գործառնական գործունեություն		
Հիմնական միջոցների ամորտիզացիա	302,104	310,930
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	25,990	35,993
Գործառնական գործունեությանը վերագրելի այլ ակտիվների (աճ)/նվազում	(8,638,889)	3,772,523
Գործառնական գործունեությանը վերագրելի այլ պարտավորությունների աճ/(նվազում)	(15,397,096)	(12,628,081)
Գործառնական գործունեությունից ընդամենը ճշգրտումներ	(20,472,086)	(7,381,953)
Ներդրումային գործունեություն		
Կապիտալ ծախսումներ	(229,202)	(249,967)
Ներդրումներ	(2,425,676)	3,625,696
Ներդրումային գործունեությանը վերագրելի այլ ակտիվների (աճ)/նվազում	-	-
Ներդրումային գործունեությունից ընդամենը ճշգրտումներ	(2,654,878)	3,375,729
Ֆինանսական գործունեություն		
Փոխառությունների և այլ վճարվելիք գումարների աճ/(նվազում)	(757,114)	754,290
Վճարված դիվիդենդներ	297,000	-
Բաժնետոմսերի վաճառք (հետգում)	-	-
Ֆինանսական գործունեությանը վերագրելի այլ պարտավորությունների աճ/(նվազում)	232,193	(724,214)
Ֆինանսական գործունեությունից ընդամենը ճշգրտումներ	(227,921)	30,076
Փոխարժեքի տատանումների ազդեցությունը	(317,684)	(547,809)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	20,242,867	40,233,493



(Signature)
Ա.ՕՍԻՊԻԱՆ
(Signature)
Ն.ՎԱՍԻՍԵԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.10.2015թ.

(Եռամսյակային)

ՀԱՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
01/07/15 թ-ից 30/09/15 թ.
(հազ. դրամ)

Նորմատիվներ	Փաստացի մեծություն	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	2	3	4
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը	6,387,505	50,000	խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	21,299,253	5,000,000	խախտում առկա չէ
Ն ₁ Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	19.92%	min12%	խախտում առկա չէ
Ն ₂ ¹ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	40.76%	min15%	խախտում առկա չէ
Ն ₂ ¹¹ Բանկի առաջին խմբի արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	31.72%	min4%	խախտում առկա չէ
Ն ₂ ² Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	161.11%	min60%	խախտում առկա չէ
Ն ₂ ²¹ Բանկի առաջին խմբի արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթով արտահայտված ցպահանջ պարտավորությունների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	123.84%	min10%	խախտում առկա չէ
Ն ₃ ¹ Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	17.47%	max20%	խախտում առկա չէ
Ն ₃ ² Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	86.68%	max500%	խախտում առկա չէ
Ն ₄ ¹ Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	1.22%	max5%	խախտում առկա չէ
Ն ₄ ² Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	5.57%	max20%	խախտում առկա չէ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը ՀՀ դրամով.	2.57%	min2%	խախտում առկա չէ
ԱՄՆ դոլարով.	20.00%	min20%	խախտում առկա չէ
Եվրոյով.	20.00%	min20%	խախտում առկա չէ
Արտաժուրային դիրքի և ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը	3.67%	max10%	խախտում առկա չէ
Ըստ առանձին արտաժուրայի յուրաքանչյուր արտարժույթի բաց դիրքի և ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը՝ ԱՄՆ դոլարով.	0.00%	max7%	խախտում առկա չէ
Եվրոյով.	0.08%	max7%	խախտում առկա չէ
Ռուսական ռուբլիով.	0.00%	max7%	խախտում առկա չէ
Այլ արտարժույթ	3.59%	max7%	խախտում առկա չէ

